



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2017 թվականի թիվ 164-Ա

ԼԻԱՆԱ ՍԱՆԱՍԱՐԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բագրատաշենի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017թ. օգոստոսի 25-ի թիվ 8 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Լ.Ալավերդյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1.Լիանա Սանասարի Ալավերդյանին 2017 թվականի օգոստոսի 29-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշենի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր և լուծել Լ.Ալավերդյանի հետ 2017թ. հուլիսի 3-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ.ԱՐՈՎՅԱՆ

2017թ. օգոստոսի 29  
ք. Իջևան